

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

____.____. 2018 թվականի

N ____ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 1191-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածների 1-ին մասերին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների ցանկը հաստատելու մասին» N 1191-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումները՝

1) <<

041801.00.6	Ագրոբիզնես	Տնտեսագիտության բակալավր
041801.00.7		Տնտեսագիտության մագիստրոս

>> տողից հետո լրացնել նոր տող հետևյալ բովանդակությամբ՝

<<

041802.00.7	Բիզնես վարչարարություն	Բիզնես վարչարարության մագիստրոս
-------------	------------------------	---------------------------------

>>:

2) <<

041801.00.6	Agribusiness	Bachelor of Economics
041801.00.7		Master of Economics

>> տողից հետո լրացնել նոր տող հետևյալ բովանդակությամբ՝

<<

041802.00.7	Business Administration	Master of Business Administration
-------------	-------------------------	-----------------------------------

>>:

3) <<

041801.00.6	Агробизнес	Бакалавр экономики
041801.00.7		Магистр экономики

>> տողից հետո լրացնել նոր տող հետևյալ բովանդակությամբ՝

<<

041802.00.7	Бизнес администрирование	Магистр бизнес администрирования
-------------	-----------------------------	----------------------------------

>>:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կրթության և գիտության նախարար Արայիկ Հարությունյան

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 1191-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Անհրաժեշտությունը

Բարձրագույն կրթության կառավարման ոլորտում դեռևս տասնամյակներ առաջ գոյություն է ունեցել բիզնես վարչարարության մագիստրոս (Master of Business Administration/MBA) կրթական աստիճանը: 2000-ականների սկզբից եվրոպական բիզնես-դպրոցների կրթական համակարգում ի հայտ եկավ նոր կրթական աստիճան՝ կառավարման մագիստրոս (Master in Management/MM) որակավորմամբ: Առաջին հայացքից այն կարծես նման է MBA-ին, սակայն այս երկու կրթական աստիճանների միջև գոյություն ունեն սկզբունքային տարբերություններ:

Բիզնես վարչարարության մագիստրոսը (MBA) և կառավարման մագիստրոսը (MM) կրթական աստիճաններ են կառավարման բնագավառում և նախքան այդ աստիճանների հայցելը պահանջվում է առնվազն բակալավրի կրթական աստիճան: Սակայն MM-ի աստիճանի դիմորդների համար աշխատանքային փորձը պարտադիր չէ, իսկ MBA աստիճանի համար այն պարտադիր նախապայման է և այդ ծրագրի դիմորդները սովորաբար որոշակի փորձ են ունենում բիզնեսի կամ կառավարման ոլորտում: MM ծրագրերի դիմորդների միջին տարիքը 21-24 տարեկան է, իսկ MBA՝ 27-32 տարեկան: Այս ամենից ելնելով տարբերվում են նաև այդ երկու կրթական ծրագրերի բովանդակությունները: MM և MBA ծրագրերը համընկնում են ընդամենը 30%-ով: MM-ի ծրագիրը առավելապես ներկայացնում է կառավարման տեսական հիմքերը: Իսկ MBA ծրագիրը շեշտադրում է կառավարման գործնական և կիրառական կողմը, ինչպես նաև զարգացնում է բիզնես վարչարարության հմտությունները: Հետևաբար MM կրթական աստիճանը նախատեսված է կառավարման բնագավառում **սկսնակների համար**, իսկ MBA կրթական աստիճանը հնարավորություն է ընձեռնում արդեն իսկ **փորձառու մասնագետներին** ունենալ հետագա մասնագիտական զարգացում, փորձի փոխանակում իրականացնել ծրագրի այլ մասնակիցների հետ և հարթակ է ստեղծում բիզնեսի, ձեռներեցության և շուկայական մտածելակերպի զարգացման համար:

Հայաստանի Հանրապետության համար բիզնես վարչարարության (MBA) կրթական աստիճանի առկայությունն անհրաժեշտ է բիզնես ոլորտի մասնագետների հետագա մասնագիտական զարգացումն ապահովելու և գործարար փորձի փոխանակման միասնական հարթակ ստեղծելու համար, ինչպես նաև զարգացնելու բիզնես մտածելակերպը:

MBA կրթական աստիճանը միջազգայնորեն ճանաչված աստիճան է և հանդիսանում է վարչարարության ոլորտում առաջնակարգ կրթության երաշխիք:

Այսպիսով, MM և MBA կրթական աստիճանները պետք է հստակ տարբերակվեն իրարից, չնայած այն բանի, որ երկուսն էլ կրթական աստիճաններ են կառավարման ոլորտում: Դրանք նախատեսված են տարբեր թիրախային լսարանների համար, տարբերվում են կրթական

ծրագրերի բովանդակությամբ և շեշտադրությամբ, առաջարկում են տարբեր մասնագիտական հեռանկարներ և հետևաբար մեկը մյուսին չի կարող փոխարինել:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները.

ՀՀ կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 23-ի N 1191-Ն որոշման «Կառավարում» մասնագիտության 28 կրթական ծրագրերի շրջանավարտներին (մագիստրատուրա) շնորհվում է «Կառավարման մագիստրոս»-ի որակավորում, որը միջազգային կրթական համակարգում չի նույնականացվում բիզնես վարչարարության մագիստրոսի որակավորման հետ:

Արդի ժամանակաշրջանում կառավարման ոլորտում լայն ճանաչում ունեցող մասնագիտություններից է «Բիզնես վարչարարությունը»՝ «Բիզնես վարչարարություն» մագիստրոսի որակավորմամբ, որն ուղղված է հաստատությունների արդյունավետ կառավարմանը և որն ընդգրկված չէ ՀՀ կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 23-ի N 1191-Ն որոշմամբ հաստատված մասնագիտությունների ցանկում:

Ելնելով վերոշարադրյալից անհրաժեշտություն է առաջացել մասնագիտությունների ցանկը լրացնելու նոր՝ «Բիզնես վարչարարություն» մասնագիտությամբ:

3. Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը.

Գործող քաղաքականության փոփոխություն չի նախատեսվում:

4.Կարգավորման նպատակը և բնույթը.

Նախագծի նպատակն է Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների ցանկում ներդնել «Բիզնես վարչարարություն» մասնագիտությունը՝ «Բիզնես վարչարարություն» մագիստրոսի որակավորմամբ:

5. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն:

6. Ակնկալվող արդյունքը.

Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների ցանկում կներդրվի նոր «Բիզնես վարչարարություն» մասնագիտությունը, «041802.00.7-Բիզնես վարչարարություն» որակավորմամբ՝ մագիստրոսի կրթական աստիճանում:

Վերոնշյալ մասնագիտության բացումը լուրջ նախադրյալներ կստեղծի ՀՀ-ում համապատասխան ոլորտի զարգացման համար:

ՏԵՂԵԿԱՆՔ

<<Հայաստանի Հանրապետության կառավարության 2014թ. հոկտեմբերի 23-ի N 1191-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ ընդունվելիք այլ իրավական ակտերի կամ դրանց ընդունման անհրաժեշտության բացակայության մասին

1. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի մասին ընդունման առնչությամբ այլ իրավական ակտեր ընդունելու անհրաժեշտություն չկա:
2. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը չի հակասում միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորություններին:

ՏԵՂԵԿԱՆՔ

<<Հայաստանի Հանրապետության կառավարության 2014թ. հոկտեմբերի 23-ի N 1191-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ ընդունվելիք այլ իրավական ակտերի կամ դրանց ընդունման կապակցությամբ ՀՀ պետական բյուջեի ծախսերի կամ եկամուտների ավելացման կամ նվազեցման մասին

Ներկայացվող <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2014թ. հոկտեմբերի 23-ի N 1191-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունմամբ ՀՀ պետական կամ տեղական բյուջեում եկամուտների կամ ծախսերի ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2014թ. հոկտեմբերի 23-ի N 1191-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ ստացված դիտողությունների և առաջարկությունների, դրանց ընդունման կամ չընդունման վերաբերյալ

Առարկության, առաջարկության հեղինակը, գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
ՀՀ Ֆինանսների նախարարության ս/թ հունիսի 11-ի հմ. 01/9-2/10383-18 գրություն	Դիտողություններ և առաջարկություններ չունի	-	-
ՀՀ արդարադատության նախարարության ս/թ հունիսի 27-ի հմ. 01/14/58722-18 գրություն	Որոշման նախագծի նախաբանում «34-րդ հոդվածների 1-ին» բառերից հետո անհրաժեշտ է լրացնել «մասերին» բառը, իսկ «36-րդ հոդվածի 3-րդ մասերին» բառերն անհրաժեշտ է փոխարինել «36-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին» բառերով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի և «Կրթության մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի դրույթները: Բացի այդ անհրաժեշտ է հղում կատարել նաև «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետին, քանի որ վերը նշված օրենքի դրույթներով է ՀՀ կառավարությունը լիազորվել ընդունելու Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 23-ի N 1191-Ն որոշումը:	Դիտողությունն ընդունվել է	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն
Հանրային քննարկում	Առաջարկություն և դիտողություն չկա	-	-